ՈՒԺի մեջ է 2025թ. հուլիսի 18-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

16 հուլիսի 2025թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ և խնայողական հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը,
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:

- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

10. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում: Բանկը կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք, այդ թվում՝ Բանկի կողմից տարանցիկ դասակարգված գործարքներ:

11. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

12. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

acba digital ԻՆՏԵՐՆԵՏ ԲԱՆԿԻՆԳ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ[2]	
42. **Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝**	
- acba digital ինտերնետ բանկինգ համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում՝ դիտարկման կամ գործարքների իրականացման իրավունքով	անվճար
- երկու մոբայլ բանկինգի (ծրագրային ապահովման) տրամադրում	անվճար
- երեք և ավելի մոբայլ բանկինգի (ծրագրային ապահովման) տրամադրում	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «Բանկոմատին փոխանցում» ծառայություն	1%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
43. **Ֆիզիկական անձանց համար՝**	
- acba digital ինտերնետ բանկինգ համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում՝ դիտարկման կամ գործարքների իրականացման իրավունքով	անվճար
- մեկ մոբայլ բանկինգի (ծրագրային ապահովման) տրամադրում	անվճար
- երկու և ավելի մոբայլ բանկինգի (ծրագրային ապահովման) տրամադրում	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
44. acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով փոխանցումներ[3]	
44.1. Փոխանցումներ Բանկի ներսում՝ անկախ արժույթից, ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	անվճար
44.2. Փոխանցումներ ՀՀ տարածքում Bank_Mail համակարգի միջոցով,[4] ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	
- ՀՀ դրամ *Բյուջետային հիմնարկների համար նշված ծառայությունը մատուցվում է անվճար*	100 ՀՀ դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ ավելի, քան 2 000 ՀՀ դրամ, իսկ մեկ օրացուցային ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 5 000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար, եվրո	3 000 ՀՀ դրամ
45. Visa Direct/Mastercard MoneySend համակարգերով փոխանցումներ միջազգային Visa և Mastercard քարտերին, այդ թվում՝ նաև հեռախոսահամարի միջոցով	ՀՀ դրամ արժույթով փոխանցումներ՝ 2%, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ - ԱՄՆ դոլար արժույթով փոխանցումներ ՝ 2%, նվազագույնը՝ 2 ԱՄՆ դոլար - եվրո արժույթով փոխանցումներ՝ 2%, նվազագույնը՝ 2 եվրո
46. Կոմունալ վճարումներ, ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա[5]	անվճար

[2] acba digital ինտերնետ բանկինգ համակարգով սպասարկման դեպքում ծառայության համար հատուկ սակագին սահմանված չլինելու դեպքում ծառայությունների տրամադրման սակագները սահմանվում են Բանկի տարածքում մատուցվող ծառայությունների սակագներին համապատասխան:

[3] Քարտային հաշիվներից փոխանցումների դեպքում գործում է տվյալ քարտի համար կանխիկացման սակագինը:

[4] ՀՀ տարածքում Bank_Mail համակարգի միջոցով մինչև ժամը 15:30-ը տրված էլեկտրոնային վճարման հանձնարարականները փոխանցվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում: Ժամը 15:30-ից հետո և ոչ աշխատանքային օրերին տրված հանձնարարականները՝ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում: 500 մլն ՀՀ դրամ, 1 մլն ԱՄՆ դոլար/եվրո արտարժույթը գերազանցող փոխանցումները կարող են կատարվել հաջորդ աշխատանքային օրը:

47. Փոխանցումներ SWIFT համակարգի միջոցով[6]	
- ԱՄՆ դոլարով՝[7]	
եղանակը՝ OUR *Փոխանցվող գումարից գանձումներից խուսափելու ցանկություն ունեցող հաճախորդներից, ի լրումն նշված միջնորդավճարի, գանձվում է լրացուցիչ վճար՝ 10 000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր փոխանցման համար (OUROUR եղանակ): ԱՄՆ-ի բանկերի շահառուների օգտին OUROUR եղանակով փոխանցումներ իրականացնելիս պարտադիր ներկայացման ենթակա է ստացող բանկի ACH (Automated Clearing House) կոդը:* «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի թղթակից բանկի միջնորդավճարը վճարում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, իսկ փոխանցումը կատարելու նպատակով ներգրավված այլ միջնորդ բանկ(եր)ի հետ կապված հնարավոր ծախսերը գանձվում է փոխանցվող գումարից դեպի Ռուսաստանի Դաշնություն և Բելառուսի Հանրապետություն	0.2%, նվազագույնը 12 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 75 000 ՀՀ դրամ 0.15%, նվազագույնը՝ 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
48. acba digital WEB տիրույթի միջոցով հաշիվների վերաբացում	անվճար
49. Տոկենի[8] (անվտանգության սարքի) փոխարինում մոբայլ բանկինգով (ծրագրային ապահովում)	անվճար
50. Մոբայլ բանկինգի (ծրագրային ապահովում) փոխարինում այլ մոբայլ բանկինգով (ծրագրային ապահովում)	անվճար
51. Տոկենի (անվտանգության սարքի) տրամադրում	10 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
52. Տոկենի (անվտանգության սարքի) ծրագրային վնասման դեպքում նոր տոկենի (անվտանգության սարքի) տրամադրում[9]	անվճար
53. ԱրՔա համակարգի անդամ բանկերի կողմից թողարկված քարտերով գործարքներ	
53.1. Քարտի կցում acba digital ինտերնետ բանկինգ համակարգում[10]	անվճար
53.2.Կցված քարտից գումարի փոխանցում Բանկում գործող հաշիվներին	100 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
53.3. Կցված քարտից քարտից քարտ փոխանցումների իրականացում	Գործարքի գումարի 1%
53.4. Կցված քարտից կոմունալ վճարումների իրականացում	անվճար
54. acba share թվային փոխանցումներ	

[5] Ներառյալ ինտերնետ և դոմոֆոն ծառայությունների դիմաց վճարումները

[6] SWIFT համակարգի միջոցով մինչև 16:30-ը տրված էլեկտրոնային վճարման հանձնարարականները փոխանցվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում: 16:30-ից հետո և ոչ աշխատանքային օրերին տրված հանձնարարականները՝ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

[7] Բանկը չի կատարում ԱՄՆ դոլարով միջազգային փոխանցումներ հետևյալ ոլորտներին առնչվող ապրանքատեսակների համար՝

- Նավթամթերք (անգլերեն՝ crude oil and petroleum products, ԱՏԳ ԱԱ դասակարգչի խումբը (CN code*)՝ 2709, 2710),
- Տրանսպորտային միջոցներ (ներառյալ՝ ավտոպահեստամասեր, ԱՏԳ ԱԱ դասակարգչի խումբը (CN code)՝ 8702, 8703, 8706, 8707, 8708 և այլն),
- Էլեկտրատեխնիկա (ներառյալ՝ համակարգիչներ, պրոցեսորներ, մոնիտորներ, չիպեր, բջջային հեռախոսներ, GPS համակարգեր և այլն, ԱՏԳ ԱԱ դասակարգչի խումբը (CN code)՝ 8418, 8419, 8422, 8450, 8517, 8526 և այլն),
- Փայտանյութ (ԱՏԳ ԱԱ դասակարգչի խումբը (CN code)՝ 44):

Տվյալ սահմանափակումները չեն տարածվում դեպի Վրաստան և Չինաստան իրականացվող փոխանցումների վրա:

* Combined Nomenclature՝ 23.07.1987թ. Եվրոպական Խորհրդի թիվ 2658/87 կարգավորմամբ սահմանված ապրանքների դասակարգման համակարգ:

[8] Տոկեն անվտանգությանը սարքը տրամադրվում է միայն իրավաբանական անձ հաճախարոդներին:

[9] Տոկեն անվտանգության սարքը համարվում է ծրագրային վնասված, եթե սարքի ֆիզիկական վնասման ակնհայտ հետքեր առկա չեն, սակայն սարքը չի տրամադրում մեկանգամյա թվային կոդ կամ տրամադրվող մեկանգամյա թվային կոդը սխալ է:

[10] Օգտատերերը հնարավորություն կունենան acba digital ինտերնետ բանկինգ համակարգում կցել իրենց՝ այլ ԱՐՔԱ անդամ բանկերի կողմից թողարկված՝ ArCa, Master, Visa տեսակի մինչև 5 քարտ:

54.1. acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «Հղումով փոխանցում» ծառայություն	տեղական քարտերի դեպքում 1%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ արտասահմանյան քարտերի դեպքում 2.5%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ Հղումով փոխանցում ծառայության միջոցով կատարված գործարքների գծով զեղծարարության, դրա կասկածի և/կամ կատարված գործարքների բողոքարկման ստացման դեպքում քարտային (ընթացիկ) հաշվին (այսուհետ՝ Հաշիվ) տվյալ ծառայության միջոցով մուտքագրված դրամական միջոցների (այսուհետ՝ Դրամական միջոցներ) օգտագործումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել կամ Դրամական միջոցները կարող են անակցեպտ գանձվել Հաշվից, իսկ դրանում Դրամական միջոցների անբավարարության դեպքում՝ հաճախորդի այլ հաշիվներից, այդ թվում՝ ավանդային: Ընդ որում՝ Դրամական միջոցներն առաջին հերթին գանձվում են Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ դրանցում Դրամական միջոցների անբավարարության դեպքում՝ այլ արժույթով հաշիվներից՝ կատարելով արտարժույթի փոխարկում տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով: Հաճախորդի՝ Բանկում առկա բոլոր հաշիվներին գումարի անբավարարության դեպքում Բանկը կարող է պահանջել հաճախորդից տասնօրյա ժամկետում Բանկին վճարել Դրամական միջոցները:
54.2. acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «Կոնտակտով փոխանցում» ծառայություն	անվճար
54.3. acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «QR-ով փոխանցում» ծառայություն	անվճար
54.4. acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «Գումարի հարցում» ծառայություն	գումարի փոխանցում acba digital ինտերնետ բանկինգ համակարգից՝ անվճար, գումարի փոխանցում v-pos տիրույթից՝ տեղական քարտերի դեպքում 1%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ արտասահմանյան քարտերի դեպքում 2.5%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
54.5. acba digital ինտերնետ բանկինգ համակարգով «Բանկոմատին փոխանցում» ծառայություն	1%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
55. Կայանատեղի վճարումներ	Մինչև 1 շաբաթ՝ անվճար 1 շաբաթ և ավելի՝ 200 ՀՀ դրամ

56. Կայանատեղի տուգանք	Մինչև 20 000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ, 20 001 դրամից մինչև 50 000 ՀՀ դրամ՝ 300 ՀՀ դրամ, 50 000 ՀՀ դրամից ավելի՝ 500 ՀՀ դրամ
57. Գույքահարկի վճար	Մինչև 20 000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ, 20 001 դրամից մինչև 50 000 ՀՀ դրամ՝ 300 ՀՀ դրամ, 50 000 ՀՀ դրամից ավելի՝ 500 ՀՀ դրամ
58. ՀԿԱԾ արգելանքի վճար	Մինչև 20 000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ, 20 001 դրամից մինչև 50 000 ՀՀ դրամ՝ 300 ՀՀ դրամ, 50 000 ՀՀ դրամից ավելի՝ 500 ՀՀ դրամ
59. Այլ բանկերի վարկերի մարումներ	400 ՀՀ դրամ
60. Globbing, ONEX, ShipEx, Auto.am, Full.am, List.am	Անվճար
61. Աղբահանության վճար	Մինչև 1 000 ՀՀ դրամ ներառյալ՝ անվճար, 1 001 ՀՀ դրամից մինչև 50 000 ՀՀ դրամ ներառյալ՝ 300 ՀՀ դրամ, 50 001 ՀՀ դրամից մինչև 100 000 ՀՀ դրամ ներառյալ՝ 500 ՀՀ դրամ
acbaMax ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐՈՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ	
62. Մուտք Բանկի բանկային հաշիվներին	Անվճար
63. Բանկի վարկի հերթական և մայր գումարի մարում	Անվճար
64. Կոմունալ վճարումներ[11]	Անվճար
65. Այլ բանկերի վարկերի մարումներ	400 ՀՀ դրամ
66. Այլ բանկերի բանկային հաշիվների համալրումներ	400 ՀՀ դրամ
67. Վարկային կազմակերպությունների վարկերի մարումներ	400 ՀՀ դրամ
68. Տաքսի ծառայությունների վճարներ	Անվճար
69. Բարեգործության վճարներ	Անվճար
70. ԷԿԵՆԳ վճարում	150 ՀՀ դրամ
71. ՀՀ ԱՆ ՀԿԱԾ վճարում	Մինչև 15 000 ՀՀ դրամը ներառյալ՝ 300 ՀՀ դրամ, 15 001 ՀՀ դրամից ավելի՝ 500 ՀՀ դրամ
72. Globbing, ONEX, ShipEx, List.am, Yerevan Ride, MIMO Bike, Skill, Full.am, Tomsarkgh.am, Crossroad, Auto.am	Անվճար

[11] Ներառյալ ինտերնետ և դոմոֆոն ծառայությունների դիմաց վճարումները

73. ՃՈ վճարումներ	300 ՀՀ դրամ
74. Աղբահանության վճար	Մինչև 1 000 ՀՀ դրամ ներառյալ՝ անվճար, 1 001 ՀՀ դրամից մինչև 50 000 ՀՀ դրամ ներառյալ՝ 300 ՀՀ դրամ, 50 001 ՀՀ դրամից մինչև 100 000 ՀՀ դրամ ներառյալ՝ 500 ՀՀ դրամ